

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Ա. ԱՇՈՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն նախարար.

Սահմանված կարգով ներկայացնում ենք «Կրթական օբյեկտների հիմնանորոգում» պետական ծրագրի 2017-2019 թթ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերում ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի հանրակրթական դպրոցների կրթական օբյեկտների հիմնանորոգումն ընդգրկելու առաջարկը՝ 2017թ. համար 150 մլն. դրամ, 2018թ. համար՝ 150 մլն. դրամ, 2019թ. համար՝ 150 մլն. դրամ: Ստորև, ըստ կրթական օբյեկտների, ներկայացնում ենք հիմնանորոգման աշխատանքների առաջնահերթությունը հաստատող շինարարական աշխատանքների համառոտ բովանդակությունը: Խնդրում ենք նկատի ունենալ, որ կրթահամալիրի կրթական օբյեկտները հիմնանորոգման ծրագրով պետական հատկացումներ չեն ստացել: Մայր դպրոց (հասցեն՝ Ա. Բաբաջանյան 25) կրթական օբյեկտից բացի, մնացած 6 կրթական օբյեկտները հարմարեցված են հանրակրթական դպրոցի: Ներկայացված աշխատանքները առաջնահերթ են, կրթահամալիրի ոչ բյուջետային միջոցներով դրանց իրագործումը հնարավոր չէ:

Առաջարկը հաստատվել է կրթահամալիրի խորհրդի 2016թ. հունվարի 29-ի նիստում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա.

ՂԱԼԱՄՔԱՐՅԱՆ

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ՝

Ա. ԲԼԵՅԱՆ

Առաջարկ

«Կրթական օբյեկտների հիմնանորոգում» պետական ծրագրի 2016-2018

թթ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերում ՀՀ ԿԳՆ «Երևանի

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի հանրակրթական

դպրոցների կրթական օբյեկտների հիմնանորոգումն ընդգրկելու

1. *Կրթահամալիրի Ավագ դպրոց-վարժարանի կրթական օբյեկտ. հասցեն՝ Ա. Բաբաջանյան 25*

Ավագ դպրոց-վարժարանը գործում է 1984թ. կառուցված 11500 քառ.մ. մակերեսով տիպային դպրոցի շենքում: Շենքը գործում է որպես կրթահամալիրի Մայր դպրոց, որից օգտվում են կրթահամալիրի բոլոր սովորողները, ուսուցիչները, ծնողները, Երևան քաղաքի բնակիչները, որ ընտրել են կրթահամալիրի կազմում գործող արտադպրոցական (լրացուցիչ կրթության) դասընթաց, պարապմունքներ: Շենքում, բացի 6-12-րդ դասարանցիներից, սովորում են երաժշտության և պարի, մարզական, տեխնիկական ստեղծագործության, թատերական դպրոցների սաները: Շենքում են գտնվում կրթահամալիրի գրադարանը, բնագիտության և տեխնիկայի կենտրոնը, մարզական և համերգային դահլիճները: Շենքը հիմնանորոգման չի ենթարկվել: Շենքի տանիքի հարթ հատվածի, 400 քառակուսի մետր, ինքնաշեն շիֆրե տանիքի մեծացող մաշվածության պատճառով խանգարվում է ուսումնական բնականոն գործունեությանը, շարքից դուրս գալիս մանրահատակը, ստեղծվում մշտական ներքին հարդարման աշխատանքների կարիք: Անհրաժեշտ է հիմնանորոգել շենքի տանիքը, փոխել առանձին պատուհաններ:

**2. Կրթահամալիրի Քոլեջ-արհեստագործական կրթական օբյեկտ. հասցեն՝ 2.
Անդրանիկի 92/1**

1982թ. կառուցված 14 խմբանոց տիպային 4200 քառ.մ մակերեսով մանկապարտեզի շենքը մեր ուժերով հարմարեցվել է Քոլեջի, արհեստագործական ավագ դպրոցի, տեխնոլոգիայի հանրակրթական կենտրոնի կարիքներին: Հիմնանորոգման չի ենթարկվել: Շենքում սովորում են 6-12-րդ դասարանցիներ, միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական 1-ամյա ծրագրով ուսանողներ: Անհրաժեշտ է հիմնանորոգել շենքի տանիքը, զուգարանները, փոխել պատուհանները, շենքի ողջ ծավալով կատարել ներքին հարդարման աշխատանքներ:

ՔՈԼԵՋԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ՆՎԱՐԴ ՍԱՐԳՍՅԱՆ

**3. Կրթահամալիրի Գեղարվեստի դպրոցի կրթական օբյեկտ . հասցեն՝ Րաֆֆու
69/1**

Գեղարվեստի հանրակրթական դպրոցը գործում է 1982թ. կառուցված 14 խմբանոց տիպային 4200 քառ. մ մակերեսով մանկապարտեզի շենքում: Շինությունը մեր ուժերով հարմարեցվել են գեղարվեստի դպրոցի կարիքներին, հիմնանորոգման չի ենթարկվել: Շենքում սովորում են 1-12-րդ դասարանցիներ: Դպրոցի նախակրթարանում գործում են 2-5 տարեկանների մանկապարտեզային խմբեր: Ֆիզիկապես մաշված թեք տանիքի ազբոշիֆերը անձրևի և ձյան համար ավելի ու ավելի թափանցիկ է դարձել՝ դպրոցում ստեղծելով ոչ հիգիենիկ վիճակ: Անհրաժեշտ է փոխել թեք տանիքը, նորոգել բացվածքի թեք տանիքը, զուգարանները, փոխել պատուհանները, շինությունների ողջ ծավալով կատարել ներքին հարդարման աշխատանքներ:

4. **Կրթահամալիրի Հիմնական դպրոցի կրթական օբյեկտ. հասցեն՝ Ծ. Իսակովի 52/6**

Հիմնական դպրոցը գործում է 1984թ. կառուցված 12 խմբանոց տիպային 3600 քառ.մ մակերեսով մանկապարտեզի շենքում: Շենքը մեր ուժերով հարմարեցվել է Հիմնական դպրոցի կարիքներին: Հիմնանորոգման չի ենթարկվել: Շենքում սովորում են 1-5-րդ դասարանցիներ, գործում են 2-5 տարեկանների մանկապարտեզային խմբեր: Կաթացող հարթ տանիքը փչացնում է դպրոցի գույքը և մանրահատակի ծածկերը: Անհրաժեշտ է հիմնանորոգել շենքի կաթացող հարթ տանիքը, կառուցել բացօթյա մարզահրապարակներ:

5. **Կրթահամալիրի Բ-4 թաղամասի հանրակրթական դպրոց-պարտեզ կրթական օբյեկտ . հասցեն՝ Ա. Բարաջանյան 38/1**

Բ-4 թաղ-ի հանրակրթական դպրոց-պարտեզը գործում է 1983թ. կառուցված 14 խմբանոց տիպային 3200 քառ.մ մակերեսով մանկապարտեզի շենքում: Շենքը մեր ուժերով հարմարեցվել է հանրակրթական դպրոց-պարտեզի կարիքներին: Հիմնանորոգման չի ենթարկվել: Շենքում սովորում են 1-5-րդ դասարանցիներ: Դպրոցի նախակրթարանում գործում են 2-5 տարեկանների մանկապարտեզային խմբեր: Անհրաժեշտ է հիմնանորոգել զուգարանները, փոխել պատուհաններ, շենքի մի մասում

կատարել ներքին հարդարման աշխատանքներ, կառուցել բացօթյա մարզահրապարակներ:

Բ-4 ԹԱՂ-Ի ՀԱՆՐ. ԴՊՐՈՑ-ՊԱՐՏԵԶԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՏԱԹԵՎ ԲԼԵՅԱՆ

6. *Կրթահամալիրի Բ-1 թաղ-ի հանրակրթական դպրոց-պարտեզ կրթական օբյեկտ. հասցեն՝ Ա. Բարաջանյան 47/1*

Բ-1 թաղամասի հանրակրթական դպրոց-պարտեզը գործում է 1982թ. կառուցված 14 խմբանոց տիպային 3200 քառ. մ մակերեսով մանկապարտեզի շենքում: Շենքը մեր ուժերով հարմարեցվել է հանրակրթական դպրոց-պարտեզի կարիքներին: Հիմնանորոգման չի ենթարկվել: Շենքում սովորում են 1-5-րդ դասարանցիներ: Դպրոցի նախակրթարանում գործում են 2-5 տարեկանների մանկապարտեզային խմբեր: Անհրաժեշտ է փոխել պատուհանները, շենքի կես ծավալով կատարել ներքին հարդարման աշխատանքներ, կառուցել բացօթյա մարզահրապարակներ:

Բ-1 ԹԱՂ-Ի ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ-ՊԱՐՏԵԶԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՆԱԻՐԱ